


Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

Ի Պոլսկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՒԻ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

2. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 27 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 248

ԱԶԴ

ԱԶԳԱՅԻՆ

Զատկէն երկու շաբաթ առաջ՝ կարգ մը բա-
ժանորդաց յատուկ նամակներ գրելով, խնդրած
էինք որ այլևս բարեհաճին այայմանաժամը լրա-
ցած ու անցած իրենց բաժնեգիրները վճարելու
և քաջայայտ էինք թէ մեր իրենց վրայ ունեցած
այնչպիսի ատենուան վստահութեան փոխարէն՝
անմիջապէս պիտի պատասխանեն. Բայց աւաղ,
մինչև այսօր սառն անտարբերութենէ ուրիշ բան
մը տեսած չըլլալով, ներկայիս կը յայտարա-
րենք որ եթէ մինչև երկու շաբաթ մեր այն
նամակներուն չի պատասխանեն, վերջին անգամ
ըլլալով ՀՐԱՊԱՐԱԿԱԼԻ ալ իրենցմէ պահանջել
ետքը դատարանի պիտի դիմենք, որովհետեւ
ամենեւին չենք կրնար ներել որ իրենց ՅՕԺԱՐ
ԿԱՄՔՈՎԸ տարի մը, տարի ու կէս կամ վեց ա-
միս մեր թերթը առնելէ ետքը անոր փոխարէ-
նը կ'լլեն:

Այլ բաւական է, միանգամայն ամօթ ալ է,
թուղթ, տպագրութիւն, գրաշար, փոթի ծախք
և այլն անկուտիաբար անտէր թարգմանէն չենք
ժողուեր կ'որ որ անանկ ալ անկուտիաբար բաժ-
նենք:



Պոլսոյ թերթերէն կը տեղեկանանք թէ Զառ-
կի առթիւ Ազգ. Հիւանդանոցի դերձակութեան
և կօշկակարութեան ճիւղերը 500 ոսկիէ աւելի
յանձնարարութիւններ կատարած են:

— Զատկի շաբթուն Պոլսոյ, Զմիւռնիոյ և Նի-
կոմիդիոյ եկեղեցիներուն մէջ յատուկ թապալա-
ներ պատեր են բազմաթիւ կարօտեալներու և
բանտարկեալներու համար:

— Ոսնայրուայի իրիկունը Իզմիրի Անգլիացւոց
Վեր. երէցը՝ իր տիկնոջ և Անգլիացի տիկիննե-
րու և օրիորդներու ընկերակցութեամբ, ինչպէս
նաև տեղւոյն Գերման սրբանոցի դատաւարակու-
հի քոյրերը հասակաւոր հայ ուրբուհիներու հետ
ներկայ գտնուելու են եկեղեցական արարողու-
թեանց, որոնց հանդիսագիրն էր առաջնորդ Տ.
Մեղքիսեդեկ Աւքեպոս: Յետ աւարտման թէ՛ Անգ-
լիացի և թէ՛ Գերման հանդիսատեսները առաջ-
նորդարան ելլելով իրենց յարգանքը մատուցելու
են Մուրատեան սրբաշանին, և զովքեր են հայ Ե-
կեղեցին, որ ցարդ պահպանած է անհուն խո-
նարհութեան յիշուածանդ պատուէրը, որուն
մէջ կ'ամփոփուի քրիստոնէութեան ոգին:

—Ազգ. Հիւանդանոցին մէջ շինութիւնք եկեղեցիին յատակագիծը Միքայէլ էֆ. Յակոբեան պատրաստել տալով զրկած է Հոգաբարձութեան, անոր ալ կարծիքն առնելու համար: Եկեղեցիին շինութեան ծախքը հաշուուած է 1500 սօկի. որուն պակասը պիտի լրացնէ Միքայէլ էֆ. Յակոբեան:

—Մայր աթոռէն, ըստ օրինի, Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան մատուցած Վիճակագիրէն կ'երևի թէ՛ բնիկ Ռուսիոյ և Կովկասի Հայոց թիւն է 1.131,474, որոնց 602,483ը այր. 530,991ը իդական սեռէ, որոնք վեց թեմի մէջ ամփոփուած ըլլալով, ունին 1.574 քահանայ, 79 վանք և 1.327 եկեղեցի: Ժողովուրդին 217.133 հոգին քաղաքաբնակ և 914.341ը գիւղաբնակ են:

—Կ Պոլսոյ մէջ կը հաշուին 40 ազգային վարժարաններ, 5376 ուսանողք և 298 ուսուցիչք:

—Ո. Թունիբէգեանց 2000 թուալի արժէքով հին գրաւներ նուիրեր է էջմիածնի Թանգարանին:

ԺԱՄԱՆՑ

ՋՈՒԱՐԹԱՅՈՂ ՋՕՐԱՎԱՐ ՄԸ

Ռոսթոմին ուսուցիչարին, որ 1812ին Մոսքուան այրեց՝ Նարսիսն Բ.ի արչտաւանքին առարկայ չընելու համար զայն, օր մը հարցուցին թէ գրի պիտի չառնէ՞ իր յիշատակները: Հոչակաւոր գորավարը իբրեւ պատասխան հետեւեալ զուարճալի հատուածը զրկեց իր բարեկամներուն:

ԻՄ ՅԻՇԱՏԱԿՆԵՐՈ

Դրոյս. Ա. Ծնունդս. — 1765ին մարտ 12ին մութ աշխարհէն լոյս աշխարհ ելայ: Զիւ չափեցին, կշռեցին, մկրտեցին: Ծնայ առանց պատճառը գիտնալու. եւ ծնողքս շնորհակալ եղան Աստուծոյ, առանց գիտնալու թէ ինչ բանի համար գոհութիւն կը մատուցանէին:

Դյ. Բ. Դաստիարակութիւնս. — Ամէն տեսակ

բաներ և ամէն տեսակ լեզուներ տալեցուցին ինձ: Շարլաթան մը ըլլալուս շնորհիւ գիտնականի մը անուն հանեցի: Գլուխս խառնափն թոր մատենագարան մը եղաւ սրբաբանալին քովս պահեցի:

Դյ. Գ. Իմ քառասուններս. — Զիւ տառագիտութիւններն եղան ուսուցիչներս: Գերձակները որոնք նեղ հագուստներ կը շինէին ինձ, կիները, սնափառութիւնը, արժանապատուութեան զգացումը, անօգուտ հոգերը, եւ յիշատակները:

Դյ. Գ. Զրկումներս. — Զրկուած մնացի մարդկային սեռին երեք գլխաւոր զուարճութիւններէն, այն է զոլովութիւն, որկրամոլութիւն և հպարտութիւնէն:

Դյ. Ե. Յիշատակելի քուականներ. — Երեսուն տարեկանիս հրաժարեցայ պարիէ. քառասուն տարեկանիս՝ հրաժարեցայ հաճոյ երեւալէ գեղեցիկ սեռին: Երեսուն տարեկանիս հանրային կարծիքին հաճելի ըլլալէ ալ դադարեցայ վաթսուն տարեկանիս դադարեցայ խօսհեղէ, եւ ստոյգ իմաստուն մը կամ անձնասէր մը եղայ, ինչ որ միեւնոյն բանը ըսել է:

Դյ. Զ. Բարոյական նկարագիր. — Զորի մը պէս յամառ եմ, թուժակի մը պէս քմահաճ, տղու մը պէս զուարթ, վայրի մուկի մը պէս ծոյլ: Պոնաբարթի պէս գործունեայ, եւ մնացեալը՝ ինչպէս որ կուզէք:

Դյ. Է. Կարեւոր որոշումներ. — Բնաւ չկարողանալով իմ գիմազծութեանս տէրը ըլլալ, թողուցի լեզուիս սանձն ալ, եւ գէշ ունակութիւնն ունեցայ բարձրաձայն խօսհելու: Ասիկա քիչ մը հաճոյք եւ շատ մը թշնամիներ վաստկեց ինձ:

Դյ. Ը. Ինչ եղայ եւ ինչ կրնայի ըլլալ. — Շատ զգայուն եղայ բարեկամութեան, ինչպէս նաեւ ինձ ցուցուած վատահոլութեան նկատմամբ: Եթէ սոկեգարուն մէջ ծնէի, թերեւս կատարեալ մարդ մը ըլլայի:

Դյ. Թ. Յարգելի սկզբունքներ. — Մասնակցութիւն չունեցայ ո և է ամուսնութեան, ինչպէս նաեւ ո և է բամբաստանքի: Մէկուն չյանձնարարեցի ոչ խոհարար մը եւ ոչ բժիշկ մը: Հետեւաբար ոչ մէկուն կեանքին վերջանալուն պատճառ եղայ:

Դյ. Ժ. Իմ ճաշակս. — Կը սիրէի փոքր ընկերակցութիւնները եւ անտառին մէջ պտուղները: Ակամայ ակնածանք մ'ունէի արեւին համար: Եւ իր մուտքը յաճախ կը տխրեցնէր զիս: Գոյներուն մէջ կը սիրէի կապոյտը: Կերակուրներուն մէջ եղան մսի խորովածը, ըմպելիներուն մէջ պաղ ջուրը: Թատերական ներկայացումներ

րուն մէջ կատակերգութիւնը և զաւելտը: Թէ՛ այրերուն եւ թէ՛ կիներուն մէջ համարձակ եւ արտայայտիչ գէմքը: Երկու սեռէն ալ կուզերը մասնաւոր հրապոյր մ'ունէին ինծի համար. զոր երբէք չկրցայ բացատրել:

Գլ. ԺԱ. Իմ համակրութիւններս. — Հեռու կը կենայի յիմարներէն, գէտ մարդոցմէն և կեղծաւոր կիներէն որոնք առաքինի երեւալ կը շանն. կը նուկայի արուեստակեալ ձեւերէն. կարգահատէի գէմքերնին ներկոյ էրիկ մարդոց և չը պարուած կիներուն վրայ: Չէի սիրեր մուկները, ոգելից բմպիւնները և բնազանցութիւնը:

Ղ. ԺԲ. Կեանքիս սարսաղութիւնը. — Աներկիւղ և առանց և է անհամբերութեան մահտան կ'սպասեմ: Իմ կեանքս մեծ տեսարաններով թառերախաղ մը եղաւ. ուր գիւցտոյն, բռնաւորի, սիրահարի, ազնուական ծնողքի գերեր խաղացի. բայց երբէք սպախաւորի մը դերը:

Պ. ԺԳ. Իմ սապանագիրս. — Հոս գրին հանգչելու համար՝ յափշտացած հոգիով, սպառած սրբտով և մաշած մարմնով ծերունի մը: Տեարք և տիկնայք. անցէք. ԹՈՍԻՈՉԻՆ

ՅԵՄԵՐԻՔ

Աման Բոճոճիկ եւ Ընկ.

Ձիւղոտ

Մեր տէրպապան սկսաւ . . . ֆեռլիրձիւթեան. տանը համար պէտք եղածէն աւելի ածուխ առնելով, քիօն 20 փարայի անոր ասն կը ծախէ՝ իր վառելիք ածուխը անկուտի բերելու համար:

Իպրաամ Ալա

Իարամտիկ շոգեկառն մը հնարուեցաւ այս տարի Ձապկի առթիւ Վառնայի տօնախմբումին մէջ: Լոքոմոթիֆն ու վալոնները որոնք տղաքներով կը լեցուէին, խումբ մը մարդամեքենաներու ձեռքով կը քաշուէին կամ կը քշուէին: Այս մարդամեքենաները շարժման մէջ դնելու և անոնց ուժ տալու համար ածուխի տեղ կը գործածուէր Տաւեճանայով տիպ ոգին, որ հանդսեան կոչուած վալոնի մը մէջ պահուած էր:

Շոգեկառքը ճամբայ հանելու համար քօնտիքթէօնը կը ձայնէր:

Դէյ արգատաշլար, հաղըր մը սընըզ. էօնտէն արգատան ետքըն պագալլըմ ու շոգեկառքը ճամբայ կելլէր արագնայաց, որուն ծանրութեանը տակ՝ քաշող ու քշողները արիւն քրտինք մտած կը տքային ու կը հեային . . .

Հիանալի գլու . . .

Ան Մէյտան

Ուլիցա Ալէքսան . . .

Դուռ գրացինքրուն հետ սիրով չի վարուելով, բնդհաւառակը զանոնք անպատուող և նախատող կողմարար Մարիամ տուտուն՝ վերջապէս պատժական դատարանին վճռովը 15 օրուան բանտարկութեան և 50 ֆր. տուգանքի դատապարտուեցաւ:

Մաղթենք որ իրեն խլատ ուրիշներուն ալ օրինակ ըլլայ այս պատիժը:

Կ. Պոլիս

Սալթանին եղբայրը՝ դահաժառանգ Ռէշատ էֆէնտին՝ հակառակ Վառնայի հայաթերթերուն իրենց «մէնապը մէվաուդէտէն» առած տեղեկութեանց՝ սղջ առողջ կ'ապրի:

Քամչաթքա

Ոտնալուայի իրիկունը մեր աւագ երէցը իր սաքերը լուալ չի տուաւ, վախճալով որ պաղ կառնէ ու նեկապիլ կըլլալ:

Հաճի Բանաքօ

Անդորժ ատաղձագործ մը՝ պանդուխտ ազգայինի մը հիւանդապահ կարգուած ըլլալով, եկեղեցիներուն, մզկիթներուն ու սինակոհին դռներուն առջև կերթար կ'աղօթէր որպէս զի հիւանդը ժամ մը առաջ մեռնելով գազապը չիիէ և անոր համար ալ գրած առնէ: Անցեալ օր, երբ վերջին անգամ հիւանդին սնարը նստած՝ (կարծելով թէ կը քնանայ) իր սովորական աղօթքը կընէր. Դէյ երկնաւոր թագաւոր, սէն պէր սուհաթ էվվէլ ալ շունուն ճանընը՝ ըսելով, հիւանդը որ արթուն էր, տեղէն կը ցատկէ և ուրիշ նանքէօր քէօքէք՝ պօռալով ետեւն կը վազէ: Այս անակնկալէն յանկարծակիի եկող ատաղձագործը բապիկ ոտքով ինքզինքը փսղոց կը նետէ և շունչը մինչև հաճի Բանաքօ կ'առնէ:

ՓՈՔԻ ԹՂԹԱՏՈՐ

Տ. Կ. Ա. Ձիւղոթի — Սաացանք ձեր բաժնեգէնը:

Գ. Լ. Ժընէվ. — Ձի զանձեցինք որ զրկենք:

Մ. Տ. Յիլիպէ — Ձեր իսկական ստորագրութեամբը կրնանք տպագրել:

ՕՐՕՐՈՑԸ

Հետեւեալը ամենամեծ շահեկանութիւն ունի ամեն անոնց համար, որոնք ընտանեկան կեանքի մաքրութիւնը կուզեն իրեն արժանի վեհութեան մէջ պահել:

Օր. Լորանս Մարտան ամուսնանալու տարիքն հասնելուն ստիպուած էր ընտրութիւն մ'ընել երկու թէկնածուների մէջէն: Առաջինը՝ Մ. Ժորժ տը Ժիրիէօ՝ դատաւորներու ընտանիքի մը կը պատկանէր, բայց տարու մեծ էր Լորանսէ, և հասուն տարիքի հասած մարդու մը բուն սիրովը կը սիրէր այդ աղջիկը: Երկրորդը՝ Մ. Ռէյմոն Զանթրէլ՝ առաջինէն աւելի երիտասարդ, աշխոյժ և սիրուն, բայց նուազ կարեւոր զիրքի տէր: Ասիկա ալ սիրահարած էր Լորանսի, բայց նուազ խորունկ սիրով մը:

Տէր եւ Տիկին Մարտան կուգէին իրենց աղջիկը Մ. տը Ժիրիէօի տալ, և կը ստիպէին զայն որ հաւանութիւն յայտնէ, բայց Լորանս միւսը նախընտրեց հակառակ իր ծնողաց կամքին, որոնք գուշակութիւններ ըրին թէ երջանկաւոր պիտի չըլլայ այս ամուսնութիւնը:

Այս միութենէն զաւակ մը ծնաւ, զոր Լորանս որ հիմայ տիկին Զանթրէլ եղած էր, բուն կերպով կը սիրէր: Բայց այս երջանկութիւնը երկար չտևեց: Օրին մէկը Լորանս, արցունքոտ աչքերով ծնողքին տունը վազեց: Իր ամուսինն անհաւատարմութիւնը աչքովը տեսած էր: Առաջին վայրկեանին զգացած տարապայման գայրոյթին մէջ ամուսնալուծութիւն միայն կերպէր: Ծնողքը փոխանակ համոզելու թէ շատերու կը պատահի այս բանը, ուստի պէտք է որ ներէ, գոնէ գաւկին սիրոյն համար, ընդհակառակը. «մենք քեզի չըսինք» ըսին, ու անմիջապէս ձեռնարկեցին աղջկանը ամուսնալուծութիւնը յաջողցնելու: Եւ իրօք կատարուեցաւ. այդ ամուսնալուծութիւնը: Դատաւորները վճռեցին որ շաբաթը մէկ օր միայն, ուրբաթ օրերը, Մ. Զանթրէլ՝ Լորանսի նախորդ ամուսինը՝ իրաւունք պիտի ունենար զաւակը իր քով ունենալու, իսկ մնացեալ վեց օրերը փոքրիկը մօրը քով պիտի մնար:

Երկու ամուսինները բաժնուելէ ետք, Մ. Մարտան համոզեց իր աղջիկը՝ թէ կին մը կարող չէ միս մինակ մեծցնել իր զաւակը, թէ պաշտպան մը, նոր հայր մը պէտք է անոր: Մ. տը Ժիրիէօ, նախկին թեկնածուն, տակաւին խորապէս կը սիրէ զինքը, եւ պատրաստ է հետը ամուսնանալու: Լորանս երգում կառնէ անկէ, թէ իրմէ ծնած զաւակի մը պէս պիտի սիրէ փոքրիկը: Մ. տը Ժիրիէօ անկեղծօրէն կընէ այդ երգումը: Ու Լորանս՝ հօրն ու մօրը ստիպումին վրայ՝ կ'ամուսնանայ անոր հետ:

Երեք ամիս ետքը փոքրիկը հիւանդ է:

Մ. Մարտանի տունն ենք, ուր Լորանս կը զրկէ զաւակը՝ ամէն անգամ որ դատարանին վճռով հարկ կըլլայ Ռէյմոն Զանթրէլի յանձնել զայն: Պաշտառն է, կը զողայ, բոլոր տունը տակն ու վրայ եղած է: Թոքատապի նշաններ կերեւան. ամբողջ ընտանիքին կեանքը օրօրոցին շուրջը կը կեդրոնանայ:

Մ. տը Ժիրիէօ, Լորանսի երկրորդ ամուսինը, ամենէն աւելի պաղարկեցնութիւնը կը պահէ բնականաբար: Քիչ մը չափազանց կը գտնէ կնոջը մտահոգութիւնը: Միւս կողմէ Լորանս կը յանդիմանէ ամուսինը՝ այսքան հանգարտ եւ անտարբեր կենալուն համար: Հիանալի է այն տեսարանը, ուր երկու ամուսինները իրենց սրտի բոլոր դառնութիւնը կը թափեն:

—Ո՛չ, այս տղիկը չէք սիրեր, կըսէ մայրը, աւելի խնամքի և գուրգուրանքի պէտք ունի:

Մ. տը Ժիրիէօ ինքզինք կը պաշտպանէ և կը պնդէ թէ կը սիրէ զայն բանաւոր սիրով մը: Բայց հետզհետէ տեղի կուտայ իր ներքին զգացումներուն: Այո՛, իր սրտին վրայ կը ճշշէ այդ զաւակը, որ չափէն աւելի կը նմանի հօրը... Ճիշդ անոր գիմագծութիւնը, անոր նայուածքն ունի:

Ու դադարներու անզգալի զուգորդութեամբ մը Մ. տը Ժիրիէօ կսկսի դուրս թափել իր սրտին բոլոր դառնութիւնը. իր արիւնճոտ, իր վիրաւոր սրտին, որ ամէն վայրկեան կը զգայ ձիւնին ներկայութիւնը յանձին այդ փոքրիկ եակին:

Ուրեմն պէտք էր հետաքննել տունէն այս տղան, զայն գիշերօթիկ վարժարան մը դնելով կամ ուրիշ ինչ կերպով որ ըլլայ:

Բժիշկը հիւանդին սնարին վերեւ սա կարծիքը յայտնեց էր. — «Երկու ամուսիններու մէջ զաւակն այնպիսի կապ մըն է զոր Օրէնքը պէտք չէ որ խորտակէ, և արդէն չի խորտակեր: Ի՞մ կարծիքս այն է թէ, ամուսնալուծութիւնը պէտք չէ որ ընտանիք մը բայթալ յիշուէ աստիճան յառաջ տարուի. հայրը մէկ կողմ թողուի, մայրը ուրիշ կողմ, եւ զաւակը աւերակներու վրայ լքուի»:

Բայց շարունակեմք:

Տղան հիւանդ է. կարելի չէ գալտնի պահել հօրմէն: Ճիշդ օրն ալ ուրբաթ է: Ռէյմոն Զանթրէլ եկած է, վարը կը սպասէ. բժիշկը արտօնութիւն կը խնդրէ Մ. տը Ժիրիէօէ, որպէս զի հայրը տղան տեսնելու քայլ: Ախտանիշները կը ծանրանան. եթէ տագնապ մը գայ ամէն բան լմացած է:

Մ. տը Ժիրիէօ վարանած է. կը նախանձի. բայց պարկեշտ մարդ է. կը զգայ թէ անիրաւութիւն մը կընէ փոքրիկին նկատմամբ, մնաց որ տղեկին հօրը խնդրածը օրէնքին համաձայն է: Ռէյմոն կուգայ լալով, պաղատելով, Ժիրիէօ կը գիմարէ, բայց Լորանս հիւանդին սննեակէն դուրս ելնել կը պատրաստուի լուրջ եւ տխուր դէմքով:

Նոյն պահուն Ռէյմոնի կը հանդիպի .

— Ի՞նչպէս է, կը հարցունէ Ռէյմոն .

— Կը բնական կոր, կը պատասխանէ Լորանս :

Եւ երկուքը, կացութեան պատճառով յուզուած մը, և առանց մտածելու թէ հոն կը գտնուի բուն ամուսինը, որ սակայն բուն հայրը չէ, միասին կը կարգան բժշկին գեղագիրը .

— Ի՞նչ տալու է երբ որ ծարաւնայ, Լորանս :

— Մոլորի (էպէ կիւմէճի) ջուր :

— Կարծեմ չի՞ սիրեր :

— Ի՞նչպէս չէ, չէ՞ք յիշեր, երբ որ հարսանիքէ բռնուեցաւ . . .

Ի՞նչ փափուկ, ի՞նչ սրտայոյզ է այս մանրամասնութիւնը : Միութեան գիծն է այն, որով մանուկին անկողինը բով կը միանան յանկարծ այս երկու անձերը զորս օրէնքը բաժնած է իրարմէ, բայց անոնք անմիջապէս կը համաձայնին մէկգտնուի հետ, երբ երկուքին հաւասարապէս սրտին գոչող բանի վրայ է խնդիրը . — Օրորոցը :

* *

Մէկ երկու շաբաթէն հիւանդութիւնը քիչ մը աղեկի դարձած է : Գթութեան քոյր մը Տիկին Մարսանի կիմացնէ այս պարագան, և այս առթիւ հիացմամբ կը յայտնէ թէ «պարոնը» ի՞նչ մեծ գուրգուրանք կը ցուցնէ պղտիկին :

Տիկին Մարսան կը խնդրէ Գթութեան քոյրէն, որ «պարոնը» չանուանէ զՄ. Շանթը, որովհետեւ Լորանս բաժնուած է անկէ եւ Մ. տը Թիրիէօի հետ ամուսնացած . հետեւաբար ա՛լ կապ մը չունի նախկին ամուսնին հետ .

— Կապ մը չունի . . . հօրը հե՛տ : Ի՞նչ կըսէք, Տիկին . երբ երկու հոգի միեւնոյն գաւկին հայրն ու մայրն են, ի՞նչպէս կըլլայ որ իրարու հետ կապ չեն ունենար : Չեմ հասկնար :

Ահա սոյն վէպի հեղինակին սկիզբունքը : Զաւակը անլուծելի կընէ ամուսնութիւնը :

Հիւանդը աղեկցած է . բժիշկը կաւետէ այս բանը Լորանսի : Ճիշդ նոյն միջոցին ներս կը մտնէ Ռէյմոն ու կըսէ . — Ճիշդ է . անանկ չէ՞ . ազատուած է :

— Այո՛, ազատուած է :

Եւ երկուքը մէկէն, բնագոյրէն, իրարու գիրկ կիշնան հեծկտալով :

Բայց Լորանս յանկարծ ինքզինքին կուգայ, կը մտաբերէ թէ Ռէյմոն ա՛լ իր ամուսինը չէ :

— Մնաք բարեա՛ւ, կըսէ խղզուած ձայնով մը :

— Մնաք բարեա՛ւ, կը պատասխանէ Ռէյմոն, ու կը մեկնի :

Անմիջապէս ներս կը մտնէ Մ. տը Թիրիէօ : Անոր ալ կիմացնեն բարի լուրը : Բայց սա մասամբ միայն կուրախանայ այս լուրէն . Չափաւանց մտահոգ է տըղուն հօրն ու մօրը դուռն գլխի տեսակցութենէն : Կը յայտարարէ կնոջը՝ թէ չի կրնար իր տունը պահել այս տղան որ իրեն համար այնքան անոյոք յիշատակներ կը վերյուշէ : Ասոր դէմ սոսկալի կերպով կը գայրանայ Լորանս, և կիմացնէ իր ծնողքին թէ այս պայմաններուն մէջ չի կրնար կենակցիլ Մ. տը Թիրիէօի հետ . Անիկա ա՛լ չուզեր իր զաւակը, իսկ ինքը ղաւկին ընկերակցութեամբ միայն կըզայ դառնալ հոն :

Հայրն և մայրը ի գուր կը փորձեն համոզել ղինքը, Լորանս կը յամարի : Մայրական խանդաղաւանքին ականջ դնել կարծելով, լսին տեղի կուտայ ուրիշ սիրոյ մը, Ռէյմոնի սիրոյն :

Կըսէ թէ «Գատաւորները կրնան ըսել թէ ամուսնութիւնը լուծուած է : Ասոնք բաւեր են միայն : Սոյոք է թէ կնոջմէն կառնեն նախօրգ ամուսնոյն անունն, բայց անկէ չէն կրնար առնել առաջին սիրոյ անկորնչելի յիշատակներն : Ի՞նչ որ ալ ընէ բաժնուած ամուսինն, ինչ որ ալ վճռէ դատաւորն, ինչ որ ալ գրէ նօտարն, ասիկայ չի մոռցուիր, չանհետանար » :

Ասիկա անհետանար թերեւ, և թէ զաւակը մէջտեղ չըլլար :

* *

Ռէյմոն Շանթը լուր առնելու կուգայ նորէն, և Լորանսը մինակ կ'դառնէ : Անուշ խօսակցութեան մը կ'սկսին որ հետզհետէ մտերմական կը դառնայ : Կը վերյուշեն անցեալին բազմաթիւ յիշատակներն, զի յիշեն իրենց բաժանման պարագաներն, երկուքն ալ կը զգնան ըրածնուն : Լորանս ինքզինքին հետ կը կռուի :

— Ո՛չ, Ռէյմոն, ոչ, ալ չեմ սիրեր դձեզ :

— Ընդհակառակն, շատ կը սիրէք զիս . ապացոյցներ կ'ուզէք, կը պատասխանէ Ռէյմոն :

Ու կը թուէ այն բոլոր խանդաղաւանքի արտայայտութիւններն զորս Լորանս անգիտակցաբար ցուցուցած էր իրեն նկատմամբ :

— Այո՛, կը պատասխանէ Լորանս, իրաւսզնք ունիք, կը սիրեմ դձեզ, բայց ասիկա երեւան հանելով աւելի դժբախտութեան կը մատնենք ինքզինքնիս :

— Այլէկ եւայէ ինծի, Ռէյմոն, կըսէ Լորանս, ուրիշներու թողունք ապօրէն սիրոյ հաճոյքները . եր-

կուրս ալ շատ բարձր ենք այդ գծով թիւներէն: Տա-
ռապանքին եւ ստորնութեան մէջտեղ, տառապանքը
ընտրենք: Ո՛հ, բարձր պահենք մեր սէրը, և մենք ալ
բարձրանանք անոր: Եթէ տեղի տամ ձեզի, պիտի ա-
մէնաբ իմ ստորնութենէս. կ'ուզեմ ձեր յարգանքին
արժանի ըլլալ. և ասոր համար է որ ինքզինքս կը պաշտ-
պանեմ ձեզ գէմ և . . . ինձ գէմ. Ուրախ . . . մեկ-
նեցէք:

* Ու մինչ Ռէյմոն իր հրաժեշտը կուտայ տղուն,
Լօրանս իր անգառնալի որոշումը կ'իմացնէ ամուսնին եւ
ծնողքին:

—Մեր մէջ նստարին և քաղաքապետին կողմէ դըր-
ուած դիւրարեկ կապ մը միայն կայ. այսչափ միայն,
ինչպէս որ սէրը ամուսնութիւնը չէ, այդպէս ալ զաւակն
է որ ընտանիքը կը կազմէ: Փորձեցինք ուրիշի մը զա-
ւակով ընտանիք մը կազմել: Ասիկա չէր կրնար յաջո-
ղիլ: Հայրութիւնը չի՛ գնուիր:

—Յանցաւոր էիք, հայր, կըսէ հօրը, վատ խոր-
հուրդներ տալով ինձ, և ես յանցաւոր էի ձեզի չընդ-
դիմանալու համար:

Եւ զայրութի արտասովոր շարժումով մը.

—Ո՛հ, կը գոչէ, ո՛ւր էր թէ իմ գգնախտութիւ-
նըս ուրիշներուն խրատ ըլլար: Ո՛հ, կը բազմայի որ կա-
րենամ պոռալ իմ այն ատենուան վիճակիս մէջ գըտ-
նուողներուն. եթէ ձեր ամուսնութիւն անպտուղ եղած
է, ուղածնիդ ըրէք. բաժնուեցէք, նորէն ամուսնացէք,
ինչ կուզէք ըրէք: Բայց եթէ զաւակ մը ունիք, եթէ
ձեր համբոյրներէն փոքր, տխուր արարած մը աշխարհ
եկած է, վերջապէս, եթէ մէջտեղը օրօրաց մը կայ, ո-
րուն մէջ պառկողը գուրգուրանքի պէտք ունի, իրա-
ւունք չունիք բանդելու անոր կողմէն հիմնուած ընտա-
նիք: Ո՛հ, իրաւունք չունիք: Դժբախտ էք եղեր, ի՞նչ
կտրեցիք ձեր ունի. տղուն մը ապագան ձոր մը երջան-
կութենէն շատ սուելի կ'արժէ:

Յետոյ խօսքը կ'ուղղէ երկու ամուսնիներուն.

—Անդարմանելի բան մը կայ ձեր և իմ մէջս.
մեկնեցէք Մ. Շանթրէլ, մեկնեցէք Մ. տը Ժիրիէօ,
միևսկ թողէք զիս հօրս և մօրս քով, և բոլորովին իմ
զաւակիս նուիրուածի:

Տխուր վերջաւորութիւն, բայց ո՞րքան ստոյգ և
որքան տրամաբանական վերջաւորութիւն:

Մ. ՊԻԵՐՕ

Թարգմ. Մ. Հ.

— 0 —

ՇՈՒԿԱՅԻ ԿԵԱՆՔԷ

— 0 —

ՍՆԱՆԿ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ ԵՒ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Ա.

Սնանկ խանութպանը փաստաբանի մը գը-
րասենեակը կ'որթայ.

—Մեծարոյ տէր. Ձեր բարեկամներէն Ֆաւթ
Ֆուռթեան Գէորգ աղան զիս ձեզի յանձնարա-
րեց:

—Ի՞նչ ունիք, նայինք.

—Գործս շատ ձախորդ վիճակի մէջ է. կու-
ղեմ հետերնիդ տեսնուիլ:

—Բացուեցէ՛ք ինձի. բացատրեցէ՛ք գործեր-
նուդ վիճակը:

—Շատ նեղ կացութեան մէջ եմ, Աստուած
թշնամիս ասանկ վիճակի մէջ չի՛ ձգէ. Քարիթալ-
իաս կերեր, ու վաճառականին ստակէն ալ մաս
մը խորեր եմ. առուտուր ըսած բանդ չիկայ. առ-
նելիքներն երկու ոտքս մէկ կօշիկի մէջ դրած
զիս կը նեղեն:

—Քանի՞ ոսկի պարտք ունիս:

—Է՛հ, 1000 ոսկի մը կեկէ:

—Որչո՞ք ապրանք ունիս.

—Հինգ հարիւր ոսկիի չափ ապրանք կայ
խանութիս մէջ:

—Վեր վար հարիւրն յիսուն բաց մ'ունիս.
պէտք է մնաւ ընեմ. թօփ նետես.

—Ի՞նչ կըրես. թօփ նետել մի՛. . . այդ բա-

ռէն անգամ կը վախնամ.

Մի՛ վախնար. նետելիքդ պարտքով չէ:

—Ինձի համար աւելի լաւ է մեռնիլ քան
թէ . . .

—Անանկ է, բայց քանի որ գործդ այդ
տեղուանքը եկեր է, ուղես չուզես պիտի սնան-
կանաս: Ամեն սնանկ քեզի պէս խորհած ու ըզ-
գացած է ամա, վերջապէս անկարելին առջիւ
զլուխ ծռած է:

—Բայց ի՞նչպէս պիտի համարձակիմ պահան-
ջատէրերուս երեսը նայիլ:

—Բան մը չէ, կը վարժուիս:

—Ի՞նչպէս պիտի սնանիմ հրապարակէն.

—Եղբայր, քիչ մը տոնն հրապարակէն չես

անցնիր, քեզնա փողոցներէն կերթաւ. ի՞նչ կ'ըլլայ եղեր.

— Ի՞նչ մեծ անպատուութիւն:

— Ոչինչ խօսքեր... Ուրիշ ճար չի կայ: Քանի որ 1000 ոսկի պարտք ու անոր դէմը 400 ոսկիի ապրանք ունիմ կ'ըսես. ըսել է որ գործդ աւրուած է, պէտք է սնանկանաս՝ ապատուելու համար. իսկ եթէ դուն այսօր չի սնանկանաս՝ վաղը անոնք քեզ պիտի սնանկացնեն՝ բոլորովին կործանելու համար:

— Ախ, ատկէ առաջ գտիւք անպատուութեան չպիտի կ'ընամ գիմանալ:

— Մի՛ վախնար, կը գիմանաս, կը գիմանաս մենք ինչո՞ւ հոս նստեր ենք. ուժ տալու համար ձեզի որ գիմանաք:

— Աստուած արեւիդ պահէ: Արդեօք անկարելի է մէկ ճարը գտնել, զորո՞ս չի դադրեցնելու համար:

— Սա կրնայ ըլլալ որ մենք անոնցմէ առաջ դատարան կը գիմենք, զիրենք կը կանչենք ու 100ին հինգ տասը տալով գործդ կը շտկենք, պզտիկ քաբիթալեամբն ալ կ'աւելցնենք որ գործըդ շտրունակես:

— Ախ, քաբիթալեան ի՞նչ ընեմ մէյ մը ազատէի սա տանջանքէն:

— Անհոգ եղիր, կ'ազատիս, վախկոտ մ'ըլլար, պատշաճ խօսք կուտամ. քեզի թէ ամեն բան կը կարգադրուի. աւերակ ունիս:

— Այո՛,

— Կանոնաւոր են:

— Առածս տուածս դրած եմ:

— Անգամ մը աչքէ անցնելու եմ:

— Շատ աղէկ, կը զրկեմ: Կ'աղաչեմ, ուշադրութեամբ քննէք:

— Ատիկա մեր գործն է:

— Ձորս գիշեր է մտմտութեա՛ն քուն չեմ քընացեր:

— Քանի մը հատ աւելի նետելու էք որ քուներնիդ տանի:

— Ի՞նչպէս պիտի ելլեմ աս գործին տակէն. լսած եմ որ գործը դադրեցնողները ամենէն առաջ կը բանտարկեն:

— Հոգ մի՛ ըներ. նայէ՛ քեզի ըսեմ. եթէ ելլաս առանց փաստաբանի ինքն իր գլխուդ բան

մը ընես, անպատճառ սխալ քայլ մը կ'առնես ու ըուն ծայրը բանտարկութիւն է:

— Ես բան մը չպիտի կրնամ ընել:

— Ուրեմն գործը մեզի ձգեցէք. նախ և առաջ մէկ քանի պզտիկ բայց անհրաժեշտ ծախքեր կան, ատոնց համար դրամ պէտք է:

— Ի՞նչ ծախք. բայց ես պատրաստ դրամ չունիմ:

— Նախ իմ՝ վարձքս. Գու գործդ 1000 ոսկիի գործ է. քիչէն քիչ, Փառթֆուութեան Գէորգ աղային խաթերը համար 100ին տասնէն 100 ոսկի կ'ընեն. մէկ մասը կանխիկ կուզեմ. մնացորդն ալ մէկ երկու քաղսիքով:

(Շարունակելի)

Հայրիկ, անցած օր կ'ըսէիր որ կարմնալը ամօթխածութեան նշան է:

— Այո՛ զաւակս, երբ մէկը իր Ըրածին վրայ կը խպնի ու երեսը կը կարմրի, ըսել է որ պարկեշտ է:

— Այս հաշուով մայրիկս շատ պարկեշտ է:

— Ինչէ՞ն հասկցար:

— Վասն զի ամեն աւտու իր երեսը կը կարմրեցէ:

—

Տիկինը՝ նոր եկող խոհարարը հարցաքննելու ժամանակ:

— Վարպետ, հաւկիթը աշա քոզք խաշելու համար քանի՞ վայրկեան կեփես:

— Խանութ, ես վայրկեան մայրկեան չը գիտեմ, հաւկիթը կը ձգեմ խայնոր ջուրին մէջ ու կ'սկսեմ «Հաւատով խոստովանիմ» կարդալ. 6 տունը որ ըսեմ, հաւկիթը կ'ըլլայ ռաւաճաւ, 12 տուն որ ըսեմ, կ'ըլլայ խայնի, որ թէքմիլ 24 տուն ըսեմ, կ'ըլլայ կարծր, քաշ ֆիւսի:

ԼՈՒԾՈՒՄՆ

Անցեալ թերթին նկարահանուկի լուծումն էր,

Ով ինչուան Զատիկ

Պարտք ունէր տալիք,

Մեծ պահքն էր պզտիկ,

Չգիտեր պահք ուտիք:

Եթե լուծողներէն Ա.Ը եղաւ Տ. Վիչէն, Աթթարեան և նուէրը տուաւ Բաբկէն Սիւնի ընթերցարանին:

ԱՅԻՆԷԻ ԼԵԹԱՅԻՖ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Արևիկալիսիս ֆգրալար վէ Հիբիայէլէր . Մալիսիս .
Թը ֆէննիյէ . Լուղաթը Լէթայիֆ . ֆէննի էյլէնճէ-
լէր վէ Բէսիսի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշը օլունան մէլքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըլմագտաարը Թիյ. 2 ֆրանք :

— 0 —



ԲԱՅ ՆԱՄԱԿ

Թէև Տօպրիշը Պուլկարիոյ պզտիկ քաղաք-
ներէն մէկն է, ուր նկարչութեամբ և լուսանը-
կարչութեամբ կը պարապիմ. ու թէև գտնուած
միջավայրս շատ յարմար չէ յառաջդիմութեան,
բայց միշտ աշխատած եմ՝ արհեստիս գիտական
և արուեստական ամենավերջին կատարելագոր-
ծութեանց քայլ առ քայլ հետեւիլ, որուն շնորհիւ
այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբ
բը օժտուած գործիքներ որոնց հետ նաև նկարչու-
թեան արուեստիս շնորհիւ կարող եմ արտագրել
ակոսանսիսումնի ամենակատարելագործեալ պատ-
կերներ, զոր մասնաւոր կերպով մշակած եմ, և
որուն մէջ նկարչութիւնը մեծ գեր կը խաղայ :
Ասիկա փորձելը դժուար չէ, կրնաք Ձեր մէկ լու-
սանկարը զրկել իմ հասցէիս և պիտի ստանաք
մեծագործ արինակին ճիշդ նման, միայն 15 ֆը-
րանքի փոխարէն, այն ալ պատկերը ոտանալէ
և հաւնելէ վերջը վճարելու պարմանալ : Իսկ ա-
նոնք որ կտաի վրայ իւղաներկ բնական գոյնե-
րով պատկերներին կուղեն ունենալ, պէտք է գա-
ղափար մը տան գոյնին նկատմամբ, (երեսի
աչքերու, մազերու և հագուստի գոյնը) բնական
մեծութեամբ, 35 ֆր. փոխարէն, վերոյիշեալ
պայմաններով :

Թէև շատեր ակոսանսիսումն պատկերներ կը
պատրաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ ոչ
մէկինը կրնայ այնչափ կատարելագործուած ըլ-
լալ որչափ նկարչի մը պատրաստածները . վա-
սըն զի առանց կանոնաւոր ուղղուշի՝ ոչ մէկ ակ-
ոսանսիսումն արժէք կրնայ ունենալ :

Յարգանք

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ-Փօթօկրաֆ ՏՈՊՐԵՇ



— Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷՐ օգոստոս հան-
դէսի Ապրիլի պրակը :

Տարեկանն է 15 ֆր. Հասցէն է

ՊԱՍՄԱՃԵԱՆ

112 Պուլկար Ռօշըշուա Բարիկ

— 0 —

ԾԱԽՈՒԴԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին :

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան
դին 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք :

Թ. Գ. Հինտլեան — Տեառկան և գործնական
Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ուկէս ֆր.
Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր.

Թրթռումներ (ոտանաւոր)	25	սնդ.
Հովատուն	25	"
Արտասուածք	20	"

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.մ.

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.
Բարեկենդանի անկոտորները, կատակախաղ 1
արար 50 սնդ.

Մահճուպիլէթին միւրեաֆաթը, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Գաղանճ գօճա եախօտ էնֆիլէճի, գօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна